ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 587-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 659-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևանի ավագանու 2022 թվականի մայիսի 24-ի «Քրիստափոր Պետրոսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» N 587-Ա որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում «Ամիրյան փողոց հ.8» բառերը փոխարինել «Այգեձորի փողոց հ.16» բառերով:

2.Երևանի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի «Հուշատախտակների տեղադրման մասին» N 659-Ա որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացում՝

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «և նրա որդու՝ անվանի քանդակագործ Դավիթ Բեջանյանի հիշատակները» բառերը փոխարինել «հիշատակը» բառով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում վերջակետը փոխարինել ստորակետով,

3) որոշման 1-ին կետը լրացնել 3-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«3) Անվանի քանդակագործ Դավիթ Բեջանյանի և նրա կնոջ՝ երգչուհի, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Նադեժդա Սարգսյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտա հ.7 հասցեում փակցնելու վերաբերյալ»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 587-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 659-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի ավագանու 2022 թվականի մայիսի 24-ի N587-Ա որոշմամբ տրվել է համաձայնություն ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Քրիստափոր Պետրոսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Ամիրյան փողոց հ.8 հասցեում փակցնելու համար:

Քրիստափոր Պետրոսյանի որդու՝ Ռաֆաել Պետրոսյանի կողմից դիմում է ներկայացվել Երևանի քաղաքապետարան, որում պարզաբանվում է, որ հուշատախտակի տեղադրման հասցեն սխալ է տրամադրված եղել միջնորդություն ներկայացնողի կողմից: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել Երևանի ավագանու որոշման 1-ին կետում կատարել փոփոխություն՝ «Ամիրյան փողոց հ.8» բառերը փոխարինել «Այգեձորի փողոց հ.16» բառերով:

Անվանի քանդակագործ Դավիթ Բեջանյանի և նրա կնոջ՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Նադեժդա Սարգսյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտա հ.7 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է նրանց դստեր՝ Էմմա Բեջանյանի կողմից: Նա ցանկություն է հայտնել իր հոր և մոր հիշատակը հավերժացնող հուշատախտակը տեղադրել այն հասցեում, որտեղ վերջիններս երկար տարիներ ապրել են միասին: Հուշատախտակի պատրաստման և տեղադրման ֆինանսական ծախսը կատարվելու է Էմմա Բեջանյանի կողմից:

ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ **Նադեժդա Սարգսյանը** ծնվել է 1954թ. հոկտեմբերի 17-ին Երևանում: 1971 թվականին ավարտել է Հայֆիլմի կինոդերասանի ստուդիան, 1992 թվականին՝ Մոսկվայի թատերարվեստի ինստիտուտը: 1973-1978 թվականներին՝ «Սերպանտին» վոկալ-գործիքային անսամբլի, 1978-1987 թվականներին եղել է Հայաստանի պետական էստրադային նվագախմբի մենակատար, 1988-1992 թվականներին՝ «Հայեր» անսամբլի և մշակութային կենտրոնի գեղարվեստական ղեկավար, 1992 թվականից, միաժամանակ՝ «Էնի Բի» պրոդյուսերական կենտրոնի տնօրեն, «Դո-ռե-մի» մրցույթի և վոկալ ստուդիայի հիմնադիր և գեղարվեստական ղեկավար, 2003 թվականից՝ Երևանի մշակույթի պետական քոլեջի տնօրեն: 1995-1999 թվականներին եղել է ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր, ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ: 2007 թվականից Հայաստանի հանրային հեռուստաընկերությունում եղել է բազմաթիվ նախագծերի պրոդյուսեր՝ «Տարեմուտի երեկո 2008», «Երկու աստղ» և այլն: 2008-2009 թվականներին եղել է «Մանկական Եվրատեսիլ» և «Նոր ալիք» երգի միջազգային մրցույթների

Հայաստանը ներկայացնող պրոդյուսեր, նաև ընդգրկվել է Հանրային խորհրդի «Կրոնի, սփյուռքի և միջազգային ինտեգրման» հանձնաժողովում: Հյուրախաղերով եղել է աշխարհի 40 երկրներում: Երգացանկում են՝ Կոնստանտին Օրբելյանի, Ռոբերտ Ամիրխանյանի, Մելիք Մավիսակալյանի, Արամ Սաթյանի, Ստեփան Շաքարյանի և այլոց երգերից:

Նադեժդա Սարգսյանը մահացել է 2018թ. հուլիսի 2-ին Երևանում:

Հաշվի առնելով վերոնշյալը, անհրաժեշտություն է առաջացել Երևանի ավագանու որոշման մեջ կատարել փոփոխություն և լրացում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**